ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

N 073-110

0231-6-09-36

02 հուլիսի 2012թ.

գ.Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի հունիս ամսվա ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր՝ 6 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Զ. Գրիգորյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 6039-12
04 07 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

04 հունիսի 2012թ. Թիվ 14

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1328-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի բնակիչ Սեդա Հակոբյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 16 փողոցի 57 հասցեում գտնվող բնակելի տանը և օժանդակ շինություններին կից 1997 թվականին կառուցված 52.4 քառակուսի մետր ավտոտնակը և 7.4 քառակուսի մետր հավաբունը, դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը` 1500 քառակուսի մետր, համայնքի բնակիչ Սեդա Տիգրանի Հակոբյանը /ծնված 15.06.1921թ./, որպես սեփական գույքի տիրապետողի, սեփականություն:

2. Սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար` Ջ. Գրիգորյան

2012 թվականի հունիսի 4
գ. Արշալույս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

04 հունիսի 2012թ. Թիվ 15

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և « Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 16 փողոցի թիվ 57 հասցեում գտնվող Սեդա Տիգրանի Յակոբյանի սեփականության իրավունքով պատկանող բնակելի տնով և օժանդակ շինություններով հողամասի վրա գտնվող 52.4 քմ մակերեսով ավտոտնակի և 7.4 քմ մակերեսով հավարան նկատմամբ սեփականության իրավունքը, որը կառուցվել է 1997 թվականին:

2.Շինության մակերեսը ենթակա են ճշտման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

4.Առաջարկել Հայաստանի Հանրապետությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանմանը գրանցել Սեդա Տիգրանի Յակոբյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված շինության նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բնդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Գ. Գրիգորյան

2012 թվականի հունիսի 4
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2012թ. Թիվ 16

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1328-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի բնակիչ Մահմադ Իբոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 7 փողոցի 47 հասցեում գտնվող 1992 թվականին կառուցված բնակելի տունը և դրան կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասը՝ 900 քառակուսի մետր, համայնքի բնակիչներ Մահմադ Քալաշի Իբոյանին /ծնված 02.03.1962թ./ Խազալ Թամոյի Իբոյանին /ծնվ. 20.04.1965թ./, Վազիր Մահմադի Իբոյանին /ծնվ. 21.12.1986թ./, Զոյա Մահմադի Իբոյանին /ծնվ. 30.12.1987թ./ և Սայադ Մահմադի Իբոյանին /ծնված20.03.1989թ./, որպես սեփական զույքի տիրապետողների, սեփականություն:

2. Սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Գ. Գրիգորյան

2012 թվականի հունիսի 12
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

25 հունիսի 2012թ. Թիվ 17

## ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի բնակիչ Մանվել Զավենի Արտուշյանի 2012 թվականի հունիսի 22-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի բնակիչ Մանվել Զավենի Արտուշյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 31-րդ փողոցի թիվ 3, 5, 7, 9 տնամերձ հողամասերը (ծածկագրեր 0095-0008, 0095-0007, 0095-0006, 0095-0005) միավորել և տալ մեկ հասցե՝ Արշալույս գյուղական համայնքի 31 փողոցի թիվ 9 տնամերձ հողամաս:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանում ՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Գ.Գրիգորյան

2012 թվականի հունիսի 25
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

27 հունիսի 2012թ.

Թիվ 18

# ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և « Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Սեդա Տիգրանի Յակոբյանի գույքային իրավունքը ճանաչելով նրա սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 16 փողոցի թիվ 57 հասցեում գտնվող 1500ք/մ օրինական տնամերձ հողամասի վրա 1997 թվականին կառուցված բնակելի տան և բոլոր օժանդակ շենք-շինությունների նկատմամբ:

2.Շինության մակերեսը ենթակա են ճշտման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

4.Առաջարկել Հայաստանի Հանրապետությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանմանը գրանցել Սեդա Տիգրանի Յակոբյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված շինության նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5.Ուժը կորցրած ճանաչել Արշալույս համայնքի ղեկավարի 2012 թվականի հունիսի 4-ի թիվ 15 որոշումը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ. Գրիգորյան

2012 թվականի հունիսի 27
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

11 հունիսի 2012 թ. Թիվ 8

# Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ  Ս Տ Ե Ղ Ծ Ե Լ Ո Ւ  Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով և 2012 թվականի հունիսի 9-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքում կարկտահարության հետևանքով տուժած բնակիչների ցանքատարածությունների և գյուղատնտեսական մշակաբույսերի վնասների չափը որոշելու համար.

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ  Ե Մ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքում ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ջ. Գրիգորյան

2012 թվականի հունիսի 11
գ. Արշալույս

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արշալույս
գյուղական համայնքի ղեկավարի
2012 թվականի հունիսի 11-ի
թիվ 8 կարգադրության

# Կ Ա Զ Մ

## Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի

Հանձնաժողովի նախագահ՝
Զարզանդ Գրիգորյան —Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավար

Հանձնաժողովի անդամներ՝

Գագիկ Մանուկյան — <<ԽՈՅ>> ջրօգտագործողների ընկերության Արշալույս գյուղական համայնքի տեղամասի պետ

Օնիկ Սարգսյան —Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության տնօրեն

Արայիկ Կնյազյան —Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ավագանու անդամ

Ասատուր Սերոբյան —Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ավագանու անդամ

Հենրիկ Վարդումյան—Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի բնակիչ